

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՓՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հերկայ 1897 տարեկանի

Պոչկարիոյ համար տարեկան 10ֆր
" " 1/2 " 5 "
Արտատպանի համար " 12 "
" " 1/2 " 6 "
Կանխիկ վճարելի

Համակ դրամ եռայն խրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՐԱԿՈՒՆԵՔ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌԵԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեայ գրութիւնը
եւ չեն դրկուիր եւ յարմար դատ-
ոշաններն միայն կը հրատարակ-
ուին ամբողջովին կամ մասամբ:

Շաբաթը մինչ ամբողջ 20 սանթիմ.
երեքէն աւելի անգամներու համար
20 առ 100 գեղջ կը լինի:

ՍԽԱԼ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ասկից առաջ մասնաւոր յօդ-
ուածով մը ուղեցինք բացատրել
այն երեւոյթը որ տեղ տեղ սկը-
սած էր երեւոյթն զալ այն հայ
գաղթականութեան մէջ զոր թուր-
քիոյ բռնակալութիւնը այժմ՝ ըս-
տեղծած է օտար երկիրներու մէջ:

Այս երեւոյթն էր անբացատ-
րելի խորշում մը աշխատութեան,
որուն պատճառները բնականաբար
չենք կրնար փնտռել ազգային
ընդհանուր նկարագրի մը գիծե-
րուն մէջ. ու ապացուցանելով հաս-
տատած էինք թէ հայ տարրը,
հնուց ի վեր, եղած է ժողովան
անխուժ աշխատող ոչ միայն իր
հայրենի հողին վրայ, այլ և այն
օտար երկիրներուն մէջ ուր գա-
ցած էր բախտ փնտռել, ու միշտ
յաջողած էր կարեւոր տեղ մը
բռնել ընկերային օտար միջավայ-
րերու մէջ իսկ:

Այժմ՝ դիտուած նկարագրի այս
անակնկալ տկարութեան ակներեւ
շարժառիթները կը բխին այն
տարտամ ու յիմարեցուցիչ վիճա-
կէն որուն ենթարկուած է ահաբ-
կու ցնցումներով, որոնք բնակա-
նաբար պիտի զգալի ընէին իրենց
տխուր հակահարուածը:

Արդ, մեր նորակալմ հապշտապ
գաղթականութեան մէջ թուրու-
թիւն մը, վհատում մը, կեանքէ
ու աշխարհէ ձանձրանալու մի-
տում մը գիտուեցան. նոյն իսկ
պահանջումներ եղան հանրային
գլխոտ ողորմածութեան, ստիպե-
լով զայն որ անպատճառ խնամէ
անպատասխար անօթի գաղթական-
ները. և, ընդհակառակը, բոլոր-
էն մերժուեցան բոլոր այն մի-
ջոցները որոնցմով աշխատող բա-
զուկ մը կրնայ ճարել իր ապ-
րուածը:

Ասոնք ամէնքն ալ եղան, ան-
հնարին է ուրանալ: Բայց այս
բաները իբրեւ զօրաւոր ապացոյց-
ներ նկատելով ելլալ յարձակիլ
հայ ազգին ընդհանուր նկարագ-
րին վրայ, հայհոյել անոր դէմ,
պարսաւել զայն և ուրանալ անոր

նստիականութիւնը, ասիկա մեզք
մըն է որ չի քաւուիր, սխալ մըն
է որ չի դարձնուիր:

Անցեալները այս գաղափարը
պարզող մէկ երկու յօդուածներ ե-
րեւոյթն Գահիրէ հրատարակուող
Փարոս լրագրին մէջ. յօդուածա-
գիրը, յանցանքն ղգացողի մը
խաղտութեամբը, չստորագրեւ իր
պարտաւորեւրը, ու կը բաւակա-
նանայ Լ. Ս. սկզբնատուերով:

Գիտէ՞ ինչ կըսէ այս խելացնոր
հայրգիրն. կըսէ ու կը փրկու-
փայէ թէ «հայը ծով է, զուրկ
ձեռներեցութեան, տխմար ֆէլլահ
լակոտէ մ'ալ տխմար...»: Ու
բաւ չհամարելով այսքան նախա-
տինք իր ազգին բարոյական հի-
ման դէմ, իր տխմար գրիչը չի
վորանիր աւելցնել «հայը աշխա-
տասէր են կոչած եւրոպացի ճամ-
բորդները, համեմատելով միայն
թուրքի հետ...»:

Կեցցե՛ք Լ. Ս., հայը տխմար
ֆէլլահ լակոտ մըն ալ չարժեք,
հէ՞. ես ձեր տեղը ըլլամ, կը ձգեմ
ասանկ գէշ նկարագրով օժտուած
ազգ մը, ու կերթամ գոնէ ֆէլլահ
լակոտ կըլլամ: Բայց կերեւայ թէ
դուք արդէն իսկ զերծ կը գտնուիք
այդ ազգային ախտանիշէն. բա-
ցառիկ արարած մըն էք որ չէք
ողբար ձեր հէք տառապալ ազ-
գակիցներուն սեւ ճակատագրին
վրայ, ու քննադատի երեւելի
գրչով կը հարուածէք անխնայ ա-
նոր թերութիւնը զոր... չունի
իսկապէս:

Ու, հայրագործով գլխածութեամբ,
պատ. յօդուածագիրը կը յորդորէ
եգիպտացեակ հայ գաղթականները
որ ելլան իրենց նախկին բնավայ-
րը, թուրքիա երթան, վասն զի
հոն միայն կրնան իբրեւ մարդ
ապրելու հաւանականութիւնն ու
նենալ, վասն զի եգիպտոսի մէջ ի-
րենցմէ վ'ր, ո՛ր, ֆէլլահ լակոտ
կայ, ու ասկէց ալ վեր Լ. Ս.:

Մեզ համար անձնօթ է թէ
յիշեալ յօդուածը ո՛ր աստիճան ըն-
դունելութիւն գտաւ եգիպտոսի
հայ գաղթականութեան մէջ. իբր-
զութիւնը սա է որ այդ տեսակ
յօդուածներ վիժած գրութիւններ
են որոնք գոյութեան իրաւունք

չունին, և արհամարհանքի ու ար-
գահատանքի առարկայ միայն կըր-
նան ըլլալ. վասն զի իր ազգին
բարոյականին մօտէն ծանօթ ու է
հայ երբեք չպիտի գործէ ասանկ
մեղապարտ սխալ մը. հետեւա-
պէս մենք, իբրեւ մեղմացուցիչ
պարագայ, կընդունենք որ Լ.
Ս. ազգային նկարագրին մեծ գի-
ծերուն բացարձակ ազէտ մըն է,
թերեւս միամիտ մը որ մեծագոր-
ծութիւն մը ընել երազեր է պեր-
նախօս յօդուածով մը մտանանիչ
ընելով անանկ բան մը, որուն
թերեւս, բացառութիւն ըլլալով,
իւր նկարագիրը միայն ենթակայ է:

Ե.

ԲԻՉ Մ'ԱՆ ՄԵՋ ԹՈՂ ՄԵՆ

Կը խորհրդարանէ՞ք իմ հարցը-
նիս: Կը փութո՞ք ինձ... Թորգ
Հարցաւոր: Կը խորհրդարանէ՞ք իմ հարցը-
նիս: Կը փութո՞ք ինձ... Թորգ

Վիկտոր Վասնով (Վիտրիկապի)

10 Յունիս

Ինչպե՞ս կ'ընենք մեր մասին գրեց
մի քանի տող, որով կ'ըսէք թէ
մենք որպէս թէ մեր «տոհմային
կապակցութիւնքը կորսնցնելու վը-
տանգին մէջ» ըլլայինք: Տիգրիսի
թերթ մը Արմազապից այսուրը:
Եւ հիմա ալ իրաւունքի այս տու-
րան Յիւրթ թուոյն մէջ՝ պատահա-
բար կը կարդանք ապրիլ 5 թուա-
կիր, անպոչ և անստորագիր նա-
մակ մը, որ նպատակ ունի ներ-
կայացնել մեր վիճակը իբր թշուառ,
անտանելի, միով բանիւ, շատ ող-
բայի: Չը մոռնանք ըսել որ Պօլ-
սոյ Ազգ. Պատրիարքարանին մէջ
ալ խօսուեցաւ մեզմէ ոմանց մա-
սին: Մենք այսպիսի լսելէ յի-
տոյ, խորհելով թէ այլեւս կարգը
մեզ եկած էր խօսելու և միանգամ
ընդ միշտ վախճան մը տալու այս
սուտ և ապերախ զրոյցին, որ
օտարաց համակրանքը հայերէն
պաղեցնելէ ի գատ ուրիշ բանի չի
ծառայեր, հերքմագիր մը պատ.
րաստեցինք, բայց մեր վարժարա-
նին բարի տեսուչը, չը գիտենք
ինչու, անպէտ և անտեղի գտաւ
մեր հերքումը հրապարակ հանելու
ձեռնարկը: Եւ մենք ճշմարտու-
թիւնը առանձին նամակներով մեր

տուները հաղորդելով բաւականա-
ցանք: Իրաւունքի մէջ նոյն զրոյցը
կրկնուած, նորանոր սուտերով պա-
րարուած և ապերախութեան
գոյներով ալ շեշտուած տեսնելով
հազիւ կրնայինք զսպել մեր ար-
դար զայրոյթը: Ազգային պատ-
ւոյն խնայելով այս նոր հրատա-
րակութեան մասին բան մը չը-
սինք տնօրէնին, բայց մեր մէջ
միահամուռ որոշեցինք վերջապէս
խօսիլ յանուն ճշմարտութեան:
Մենք հայ զաւակներ ենք. և մեր
սիրելի ազգայինք իրաւունք ու-
նին մեր վիճակին լիովին տեղեկա-
նալու:

Հանրածանօթ հայասէր Տ. Լօ-
մանի (և ոչ Տր. Լէփսիւսի) կար-
գագրութեամբ և մեր պարագայից
ու մեր անձնական յօժարութեամբ,
մեզմէ չորսը 1896 հոկտ. 27ին և
12ը անկէ երկու ամիս վերջ՝ Պօլ-
սէն երկրորդ կարգի ճամբորդու-
թեամբ հանգիստ կ'ընէին բերուե-
ցանք Ֆրանքֆուրթ, ուր մեզի եւ
զած ամենաշերտ ընդունելութիւնը
և ողորդական տիկնոջ մը տան մէջ
մեզի ցոյց տրուած մայրական սէրն
և քրիստոնեական հոգատարու-
թիւնը անչինչ պիտի մնան մեր
մտքերուն և սրտերուն մէջ: Երախ-
տագիրական քաղցր տպաւորու-
թեանց ներքեւ թողուցինք Ֆրանք-
ֆուրթ և առաջնորդուեցանք հոս,
կրթական հաստատութեան մը մէջ
պատասխարուելու և ուսանելու հա-
մար: Հոս եւս եղաւ մեզ նոյն
շերտ ընդունելութիւնը և նոյն ըն-
տանեկան հոգատարութիւնը: Ա-
ռաջին ամիսները, երբ դեռ լեզուն
չէինք գիտեր, բնական էր որ քիչ
մը նեղուէինք հասկնալու և հաս-
կըցնելու համար: Մեր գործը աս-
տիճանաւ մը գիւրացնելու համար
գոտատուններէն մին սկսաւ հայե-
րէն սորվիլ, (և իբրեւ գործնական
և աննկուն է գերմանական ոգին):
Եւ ահա Զուլիցերիայէն օգնու-
թեան հասաւ Գեր. Պատ. Յ. Շահ-
վէլտեան, որ միայն քանի մը
շաբաթ անցուց մեր մօտ արդիւ-
նաւոր կերպով: Եւ իր մեկնելէն
յետոյ կամաց կամաց կարգերու
մէջ գիտեղութեանք:

Ճիշդ այդ միջոցին (մարտ) մեզմէ

հինգը (16, 15, 13, 11, 8 տա-
րեկան), լսելով որ իտալիա հայոց
համար յատուկ կրթական հաստա-
տութիւն մը բացուել է, ուր
կան եղբի հայ դասատուներ, ցան-
կութիւն ունեցան և Ս. Պատրիար-
քէն ալ գրով աղերսեցին որ իրենք
հոն փոխադրուին, և եւրոպակա-
նին հետ մէկտեղ ազգային կրթու-
թիւն ալ առնեն: Ս'նացեալքս այդ
հեռուոր թմբկի ձայնէն չհրապուր-
ուեցանք: Եւ ահա մեր հինգը ըն-
կերաց այդ պարզ խնդրագիրն է
որ այնքան անհաճոյ քաշկռտուք-
ներու և ապերախտական ցոյցերու
տեղի տուած է:

Եւ արդարեւ մեզ համար հայ
դաստիարակի մը պակասը աչքի
զարնող պակաս մըն էր: Եւ մեր
սիրելի Տնօրէնը Տ. Յիկլըր, ի
պսակ իր բոլոր բարութեանց,
մեզ համար հրաւիրեց փարիզէն
յայտնի բրոֆ. Գայանանը որ մա-
թիսի 8/20 ին եկաւ հոս ի մեծ
բերկրութիւն հայ պատանեացս:
Այս խոհմ' կարգադրութեան հա-
մար Տնօրէնին որքան երախտա-
գէտ ըլլանք դարձեալ քիչ է:
Բրոֆ. Գայանանի ներկայութիւնը,
ազգ. լեզուի, գրականութեան,
պատմութեան, ֆրանսերէնի ևն.
են. ոգեւորելու դասախօսութիւն.
ները մեր դասարանը իսկապէս
հայկական դասարան մը ըրած են:
Հիմա բոլորս երեք կարգերու մէջ
բաժնուած՝ միւս ազգի տղոց հետ
կանոնաւոր կերպով յառաջ կը տա-
նինք նաեւ մեր գերմաներէնը և
ուրիշ ուսումները, որ մը մեր
պաշտելի հայրենեաց ծառայելու
ցանկութեամբ միշտ վառուած:

Գալով մեր կացութեան ուրիշ
կողմերուն, բառին լեցուն իմաս-
տովը մեր՝ մեծէն սկսելով մինչեւ
ամենաչնչին բոլոր պէտքերը կը
հոգացուին մեր բարի տնօրէնին
ձեռամբ. մինչեւ իսկ մեր նամակ-
ներուն փոստագիրը կը վճարէ անո-
րէնը:

Բացարձակապէս կը բողոքենք
այն ստութեան դէմ՝ որ հոս մեզ
իբր կենդանի գործի վարած ըլ-
լան: Այն միակ չնչին աշխատու-
թիւնը զոր ունինք, է՝ ամեն առա-
ւօտ մեր անկողինները շիտկել, մեր
կօշիկները փայլեցնել և... ուրիշ
ոչինչ, բացարձակապէս ոչինչ: —
Թէեւ ուրախ պիտի ըլլայինք մեր
վայելած երախտիքը փոխարինելու
առիթներ ունենալու: — Ս'եր ցո-
րեկեան բոլոր ժամերը գրաւուած
են մեր ուսումներէն և զբօսանք-
ներէն, և գիշերն ալ, ուրիշ բո-
լոր մահկանացուաց պէս կը քնա-
նանք մաքուր անկողիններու վրայ,
որոնք ոչ մէկ բանով չեն տարե-
րի Գերման, Չուիցերիացի, Ֆրան-
սացի և Անգլիացի աշակերտաց
անկողիններէն:

Իսկ մեր սնունդին վրայ որոշ
գաղափար մը տալու համար բաւա-
կանանք յիշել հետեւեալ կարգը:
Առտուան ժամը 7ին խոշոր գա-
ւաթներու մէջ պատուական կաթ-

նասուրճ մը, — զոր շինելու գաղա-
նիքը կարծես միայն գերմանուհի-
եաց վերապահուած է, — և ճեր-
մակ հացի հաստկեկ շերտ մը:
Ժամը 9ուկէսին ամեն աշակեր-
տի ձեռք կը տեսնեն հացի խո-
շոր շերտ մը երբեմն հետը պտուղ
և ալյոն, և ամենաչնչին վճարումով
կուտան մէյ մէկ գաւաթ կաթ.
կէս օրին ընտիր ճաշակով պատ-
րաստուած երկու երբեմն երեք
տեսակ սննդաշատ կերակուր: Ժամը
4ին դարձեալ կաթնասուրճ, հետը
հացով, կամ խնձորի գինի. և
ժամը 7ին ընթրիք, որ առ հասա-
րակ երկու տեսակ կերակուրէ կը
բաղկանայ, երբեմն ալ երեք: Եթէ
կիրակնօրեայ յատուկ կերակուրեն-
բու և կարկանդակներու ցուցակը
տանք՝ կը վախճանք որ Չուր Պատ-
ընթերցողները մեզ փափկակեր և
միանգամայն շատակեր անուանեն:
Չը մոռնանք ըսելու որ մեր սն-
դանի սպասք արժաթեղէն են, և
Տնօրէնը, Տիկինը, և դասատուք
միշտ մեր սեղանակիցներն են:

Հաստատութեան մատակարա-
րած մտաւոր և մարմնաւոր սնունդ-
ները այնքան առողջարար և գո-
հացուցիչ ճանչցուած են որ, ինչ-
պէս յիշեցինք, զանազան երկիր-
ներէ պատանիներ և երիտասարդ-
ներ գունդադուռ հոս կը դիմեն,
ու այսօր անոնց թիւը 172 է, ո-
րոց մէջ կան նաեւ պապականներ:
Հայերէս իզատ բոլոր աշակերտ-
ներ թոշակաւոր են: Իսկ մեր ըզ-
բօսանաց համար են չըլակայից
մարդերն ու անտառները, լիճերը,
ուր կը լուացուինք ամէն օր,
մարմնամարզական գործիքները,
կիրակնօրեայ մասնաւոր արշա-
ւանքներն են. ևն: Գերմանիոյ
ուրիշ կողմերը և Չուիցերիա
գտնուող հայ տղաք մեր վիճակ
իրենցինքն աւելի նախանձելի կը
գտնեն, և իրաւունք ալ ունին:

Գալով կրօնական ազատութեան,
կը յայտարարենք որ մինչեւ օրս
ոչ մէկը մեզ հարցուցած չէ թէ՝
ինչ գաւառներ կը պատկանինք:
Ս'եր աղօթքները կ'ընենք մեր ու-
ղած կերպով, մեր շարականներն
ու մեր երգերը կ'երգենք ամենայն
ազատութեամբ և մեր եղանակ-
ներէն այնքան ախորժեցաւ Տնօ-
րէնը որ մեզ չորս ժամ հեռուն
բաղաք մը տանելով հոն մեծ ժո-
ղով մը առջեւ երգել տուաւ:

Եւ այս գլուխն ալ լինցնելու հա-
մար յաւելունք որ բրոֆ. Գայա-
նան տեսնելով որ մեզմէ ոմանք
հայ եկեղեցւոյ աղօթագրքը չու-
նին, իսկոյն աղօթագրքեր և շա-
րականներ ապսպրեց կ. Պոլսէն:
Օտար երկրքի մը տակ այսքան
գիւրդութիւն, այսքան առաւելու-
թիւն և այսքան բախտաւորու-
թիւն մեր մօքէն չէր անցներ:
մենք միշտ երախտագէտ ենք,
և եթէ ուրիշ հայեր, յանուն տա-
ռապետ հայութեան մեզի եղած
այս բազմատեսակ բարեաց համար
շնորհակալ ըլլալ չեն գիտեր, գո-
նէ թող լռեն:

Այս առթիւ կուզենք Չուր պատ-
ընթերցողներուն իմացնել նաեւ
թէ, թուականէս տասն օր առաջ
Պարմընի մէջ տեղի ունեցած ժո-
ղովոյ որոշման համեմատ մեր ըն-
կերներէն հինգը այս օրերս Պո-
լիս պիտի վերադարձուին: Հին-
գին երեքը, մեր մէջ տարիքով ա-
մենէն պզտիկներն ըլլալով (Տ. 11.
13 տրեկ.) պանդխտութեան չէին
կրնար և չկրցան վարժուիլ, ինչ-
պէս նաեւ դպրոցական աշխատա-
նաց (*): Չուրորդը (15տ.), գործի
տղայ ըլլալով, Պօլիս կը վերա-
դառնայ, իր առջի արհեստը շա-
րունակելու: Հինգերորդը (16 տ.)
Արմաշու վանքը պիտի երթայ
կրօնաւոր ըլլալու:

Ս'եր մեկնելիք ընկերաց տեղ
ուրիշ հայ տղայք պիտի ընդու-
նուին, և որոնք արդէն ընտրուած
են:

Ստորագրութիւնք

Մ. Արալանեան (20 տարեկան), Ղ.
Մանուկեան (18 տր.), Գ. Աբրահամ-
եան (18 տր.), Տ. Արալանեան (18
տր.), Գ. Գալսեան (18 տր.), Յ.
Շահինեան (18 տր.), Մ. Երէցեան
(17 տր.), Գ. Յակոբեան (16 տր.),
Եր. Սինանեան (14 տր.), Յ. Գալթա-
եան (14 տր.), Մ. Գուլագանեան (13
տար.), [***], [***], [***],
[***], [***]:

ՀԱՅԵՐՆ

Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ՊՈՒԼԱՐԻԱ

Բ.

ՊՈՒՐԿԱԶ

Սակայն ամենէն ուշագրաւ ե-
րեւցաւ ինձ աշակերտներուն ու ա-
շակերտուհիներուն սիրալիր համար-
ձակ և միանգամայն յարգական
ընթացքը իրենց ուսուցիչներուն
հետ: Գպրոցը ընտանիք մըն էր,
կարծես, որուն ծնողքն էին ու-
սուցիչները:

Հոս է ըստ իս մանկավարժի մը
բոլոր ճարտարութիւնը:

Այս ամէնը լաւ, սակայն ցա-
ւալի բան մըն ալ կայ զոր պար-
տիմ յիշել և որ արդի թաղ. խոր-
հուրդին և հոգաբարձութեան ան-

(* Սոյն նամակը կը հրատարակենք
յանուն անկողնակալութեան: Մենք
անկեղծօրէն ուրախ կ'ըլլանք եթէ ա-
նոր պարունակութիւնը ամէն մասամբ
ճիշդ ըլլայ: Արդէն ասկից առաջ յայտ-
նած էինք թէ վիճելատարօքի հայ
որբերուն համար բարիք մը պիտի ըլ-
լար Պ. Գայանանի անուանումը իբրեւ
դաստիարակ սոյն գերման վարժարա-
նին մէջ: Աւաստի այսօր ապացոյցը
կուգայ մեզ:

Բայց քիչ մը զարմանալի չի՞ թուիր
առջի նամակին ու այս նամակին ի-
մաստներուն մէջ եղած անսահման
տարբերութիւնը՝ բոլորովին իրարու
հակառակ: Կերեւայ թէ դպրոցական
աշխատանքանց չգիտնալով Պոլիս
զարձող տղաքներէն մէկն էր առջի
նամակին հեղինակը:

Ինչ ալ ըլլայ, հայ որբերու արդի
վիճակը, պատմութեան համեմատ,
լաւ է եղեր. ասիկա ամէն մարդ պէտք
է ուրախացնէ:

գործութիւնն ու անհոգութիւնն է:
Թաղ. խորհուրդը պաշտօնի կո-
չուելէ ետք միայն հանգանակու-
թիւն մը կատարած է եկեղեցիին
պարտքերը վճարելու համար, այ-
նուհետեւ ոչինչ ըրած է, և ինչպէս
կերեւի այսուհետեւ ալ միտք չու-
նի գործելու, թէեւ կարգ մը
գործեր կան իր հոգածութեան
սպասող: Պատուարժան խորհուր-
դին անգամները ճանչնալու պա-
տահոթութիւն չունեցայ, բայց կը-
սեն թէ չունին իրենց պաշտօ-
նին պահանջած ձեռնհասութիւնը:
Եթէ ճշմարիտ է այս, շատ ցա-
ւալի է. և ալ աւելի ցուալին
այն է, որ ժողովուրդը իր
քուէն տալու ժամանակ շատ չը
փնտռեր թէ ինչպիսի անձեր
ընտրելու է: Շատ տեղեր կը պա-
տահի միեւնոյն բանը:

Հոգաբարձութիւնը բոլորովին
համերաշխ կ'ընթանայ թաղ. խոր-
հուրդին հետ անգործութեան մէջ
և զայն կը գերազանցէ ալ այս
մասին, իր իննամեայ գոյութե-
նէն ի վեր բացարձակապէս ոչինչ
գործած ըլլալով: Հոգաբարձու-
թիւնը, կարծես, այսպէս հաս-
տատել ուղեր է թէ աննպատակ
էր իր ընտրութիւնը, որ առաջին
անգամ Պուրկազի մէջ տեղի ու-
նեցեր է անցեալ տարի հոկտեմ-
բերին: Եթեւայ այդ ժամանակ
ազգ. ամէն գործերը վարելու և
վարժարանի ծախքը հայթաթե-
լու հոգը կը ծանրանար միայն
թաղ. խորհուրդին վրայ: Անտե-
ղի հակառակութիւններէ և անձ-
նական հաշիւներէ ծնած ժողո-
վրդական պառակտումներ պատ-
ճառ եղած են հոգաբարձութեան
մը ընտրութեան. նախորդ թաղ.
խորհուրդի հակառակորդներէ ո-
մանք պատշաճ դատած ըլլալով
կառավարութեան դիմել խնդրե-
լու համար որ ինչպէս ուրիշ տե-
ղեր, Պուրկազի մէջ ալ ժողովուր-
դի քուէով հոգաբարձութիւն մը
ընտրուի և վաւերանայ կառավա-
րութիւնէն: Իրենց այս փափագը
կը կատարուի. բայց ինչպէս ըսի
նորեմտիւր հոգաբարձութեան ա-
նունը կայ, ինք չկայ. մինչեւ
հիմայ կենդանութեան նշոյլ մը
իսկ ցուցնելու փոյթ ըրած չէ:

Իսկ ժողովուրդը անհոգ անհոգ
կը դիտէ այս վիճակը. անտար-
բեր չերեւցողներն ալ տիրացուա-
կան խնդիրներով կը զբաղին:
Հոգ չէ, եթէ ազգ. տուրքը չհա-
ւաքուի, պաշտօնեաներուն ամսա-
կանները կանոնաւորապէս չվճա-
րուին, կամ ուրիշ կարեւոր գոր-
ծեր երեսի վրայ մնան. կարգ մը
ազգայիններու համար ամենէն
էական խնդիրն է գիտնալ թէ
ինչու համար այսինչ օր եկեղե-
ցիին մէջ մասը բաժնուեցաւ Ա-
ռաքելոյի ժամանակ, թէ ինչու
համար տղայ մը առանց հողա-
թափի սեղանին վրայ կ'ուտ. ճիշդ
ժամանակը գտեր են այսօրինակ
խնդիրներու նուիրելու իրենց բոլոր
ազգասիրական ուշագրութիւնը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Ռուսացական մեզ կը գրեն հե-
տեւեանները:

Հայերս, ընդհանուր առումով, երբ
կարգը մեծ մեծ ջարդելու կուգայ,
մեծէն պատկերներ մասնաւոր հաճոյք մը
կը զգանք մեր չունեցած բարեմասնու-
թիւններով պարծիլ եւ աննպաստ հան-
գամանքներով վերադարձ մեր շատ մը հին
եւ նոր թերութիւններէ ծխուր իրո-
ղութեան իրազէկ ըլլալու համար վեր
առնենք այդ աննպաստ հանգամանք-
ներուն ծածկոցը ու պիտի տեսնենք
թէ դարձեալ նոյնը ենք ինչ որ էինք:
Օրինակի համար, առաջ բերենք մեր
կրթական գործը, Թուրքիայէ գուրս:
Մինչեւ հիմայ երես ճերմկցուող վար-
ժարան մը ունեցած ենք զոնէ ամե-
նէն հայաշատ կեդրոններու մէջ: Մեր
եզրկարողական եղբայրները պարզապէս
կաթով իրենք մը անցքին տալով մեծ
մեծ գումարներ ծախսել գիտցան,
բայց կանոնաւոր վարժարան մը յարա-
տեւ ու գոհացուցիչ ընթացքի մէջ պա-
հել երբէ՞ք, հակառակ իրենց նիւթա-
կան բարեկեցութեան: Իսկ Պուլկա-
րահայերս ամբողջ տարրին դանդաղորէն
յառաջացումը մեր խօսակցութեանց
բնաբան ընտրելով բոլորովին մոռ-
ցանք մեր գաղտնիքներուն վրայ աչքեր-
նիս պատրուակել: Ինչ է այս ամենի
չարժանիքը եւ գաղտնիքը, որ զմեզ
կը պահէ միշտ կամաւոր կուրուքեան
մը մէջ: անշուշտ մեր եսամոլութիւնը
եւ անպարծութիւնը որք աւելի մշակ-
ուած են մեր բարեկեցիկ դասուն մէջ:
Քիչ շատ իրեն համար նիւթական ան-
կախ գիրք մը ստեղծողը կամ բոլոր-
վին մէկի կը քաշուի մոռնալով իր
բնկերական ու ազգային պարտաւա-
նութիւնը, եւ կամ հանրային գործե-
րու մէջ իշխող մը ըլլալու սաստիկ
տենդով կը բռնուի առանց ըլլալու ար-
գիւնաւոր անտես փառքի ցանկացող:
Բացառիկ երեւոյթներ կը համարուին
եւ շատ ցանցաւ թիւ մը կը կազմեն այն
անհատներ որ ազգային պաշտօն մը
կատարենք պարտուց գիտակցու-
թեամբ: Այսպիսիները միշտ խուսկով
մոռով կը փնտռուին մեր մէջ:

Միւթարութիւն մըն է մեզ համար
տեսնել՝ այս քաղաքին մէջ նոր գաղտնի
մը կատուցանելու համար եղած ջան-
քերը: Այդ եւանդը նոր չէ, 4 տարի
ստալ ալ անգամ մը երեսն հազար մեր
աղանիստ սրտին մէջ, բայց եսամո-
լութեան, կամայականութեան եւ ան-
համարաշխութեան բախիւով ջարդ ու
փշուր եղաւ: Գիտակցութեան կենդանու-
թիւն առած է: Եւ մաղթենք որ այս
անգամ իրագործուի:

ՂԱՐԻՊ-ՂՈՒՐՊԵՐ

Ճեղուայ երկսեռ հայ վարժարանին
տարեկան քննութիւնները աւարտե-
ցան, եւ ուսանողներու ամենքն ալ
շատ գոհացուցիչ (°) եւ յաջողակ պա-
պանձումներով ու շուարումներով պա-
տասխանեցին այն ամեն կարգի հար-
ցումներուն որոնք ուղղուեցան իրենց
յարգելի հարցաքննողներուն կողմէ:
Ունկնդիր հանդիսականները այնքան
զոհ, տպաւորութեամբ կը մեկնէին
զպարտէն որ չէ կարելի նկարագրել:
Մեծ ուսուցիչներն ու ամենագէտ հո-
գաբարձուները սիրալից շնորհակալե-
քներ ու բարեմաղթութիւններ փոխա-
նակեցին իրարու այս առթիւ: Եւ բնա-
կան է որ այսպիսի միւթարական ե-
րեւոյթներ հարկ է արձանագրուին իր-
րեւ վարձ այն ճերմակերեւ վարժա-
պետներուն եւ հոգաբարձուներուն,
որպէս զի չգալին օր մը ապահանջ:

Կոչելու ազգը՝ հրապարակաւ գովուած
չըլլալուն:

Կայաց, 29 Յունիս

Այս տարուան ամսագրային ա-
ւերոյ անձրեւներուն ու փոթո-
րիկներուն մէկ կարեւոր մասը
ուսմանական հոլին վրայ թափե-
լի զայրուցքը: Արտուրը փա-
ստեցան, հազարաւոր պարտէզ-
ներ ու այգիներ արմատախիլ ե-
ղան, շատ գիւղեր ու քաղաքներ
աւերեցան, մահաւանդ կալաց:
Դանուրի եւ Բրուտի փոքրաւից
մոլեգին արշաւանքին զէմ պաշտ-
պանելու համար քաղաքապետու-
թիւնը շարժեցին առաջ թում-
բեր կը շինէր ու կամարացէր քա-
ղաքը: Բայց հակառակ այս նա-
խադուշական միջոցներուն, յան-
կարծ Բրուտին ջուրերը, հիւսիսի
սաստկավար քամիէն մղուելով,
քանդեցին թումբերն ու ներս վա-
զեցին ողողելով Դանուրի հիւսի-
սային եկերքի թաղերը որոնք
իր 6-7000 շէնք կը պարունա-
կեն: Այս ողորմ տեղի ունեցաւ
յունիս 16 ին, երեքշաբթի իրի-
կուն, ժամ 4 ին: Երբ զինուորներ
իրաքանչիւր փողոցի բերան կե-
ցած՝ սարսափելի կերպով կը հնչե-
ցընէին փախուստի փողերը, ամէն
մարդ իրար անցաւ: մէկ իր դա-
կին, միւսը իր սիրելիին ձեռքէն
լռնած սկսան փախչիլ ջուրի կա-
տաղի հոսանքին ձգելով իրենց
բոլոր ունեցածն ու չունեցածը:

Թէեւ զօրքեր ու քաղաքներ
բնակիչներն օգնութեան հոսան
արկածանքներուն, բայց ինչ օգուտ
որ ջուրն արդէն անցած իր սահ-
մաններէն յարձակած էր բնակու-
թիւններու վրայ, Բրուտին կող-
մէն 4, իսկ Դանուրի կողմէն 1 1/2
մէթր բարձրութեամբ: Տուներու
կահ կարասիներէն շատ քիչ բան
կարելի եղաւ աղատել ջուրին կա-
տաղութենէն: Շատեր խեղդուե-
ցան, ոմանց դիակները գտնուեցան
ու զեռ կառավարական պաշտօն-
եաները նաւակներով թաղերու
մէջ կը պտտին ու կաշխատին
գտնել ուրիշ գիւղեր: Ջուրը
իր բարձրութեան պէն վրայ կե-
ցաւ ու թ օր շարունակ եւ այժմ
սկսած է տակաւ վար իջնալ: Կա-
ռավարութիւնը անմիջապէս երկու
խոշոր մեքենաներ բերել տուաւ
ջուրը պարպելու համար: Կըսուի
թէ ցամքեցնելէ ետք, կառավա-
րութիւնը ինք իր ծախքով պիտի
նորոգէ բոլոր այն փաստուած շէն-
քերը որոնք աղքատ գոտակար-
պին կը վերաբերին ու պիտի
յանձնէ տէրերուն:

Գալով Ռուսիան կառավարու-
թեան ընթացքին հանդէպ հայե-
րուն, բոլորովին անհիմն էր այն
լուրը թէ անոնց մուտքը թոյլատ-
րուած է Ռուսիան հոլը: այս լու-
րէն շատեր խաբուելով եկան,
բայց կառավարութիւնը արգիլեց
անոնց ներս մտնել: Խեղճերը 2-3
օր կը մնային ջուրին երեսը ա-

նօթի ծարաւ ու ապա կը վերա-
գաւնային: Այս տարի տեղույս
հայ բնակիչը եղբայրներուն վի-
ճակը շատ տխուր է՝ գործի չը-
գոյութեան պատճառով: մէկ
կողմէ հայրենիքէն եկած նամակ-
ները որոնք գաւն գոյներով կը
նկարագրեն անոնց ընտանեկան
կացութիւնը եւ միւս կողմէ իրենց
բաւկի գատարկութիւնը, կը լա-
ցունեն այս հէգ հայ աղբրաւանքը:

—Տեղացի հայերը նիւթական
տեսակետով շատ լաւ են: Իսկ
աղբային ու եւ բարենպաստակ
ձեռնարկութեանց մէջ պէրօ: զըպ-
րոց չունին եւ բանալու տրամադ-
րութիւն բնաւ: Փուճ ելան այն
խօսքեր թէ կալացի մէջ հայ
գաղտնի է բացուած, ուր կը յա-
ճախեն ոչ միայն տեղացի անուս
մանկտին, այլեւ գաւառացի բեռ-
նակիրն ալ:

Մշեցի

ԱՐԾՐՈՒՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Հինգշաբթի օրը տեղի ունեցաւ
տեղույս Արծրունեան վարժարանի
վկայականներու բաշխման հանդէ-
սը, յարմար վայրի մը մէջ:

Ծանօթ գրագէտ Պ. Հրանտ Կիր-
ճւան որ հիմնադիր—տնօրէնն է
վարժարանին, հանդէսը բացու-
տեղեկութիւններ հաղորդելով
վարժարանին հիմնարկութեան եւ
տարույս ընթացքին մէջ ունեցած
յառաջդիմութեան մասին: Իր
այս տեղեկութիւններէն կը հե-
տեւ թէ վարժաքանը գոհացու-
ցիչ արդէնք տուած է, այնչափ
որչափ կրնայ սպասուիլ նորահաս-
տատ կրթարանէ մը: Կը խոստա-
նայ նոր տարեշրջանն աւելի ար-
գիւնաւոր ընծայել, նախակրթա-
րանի մը ծրագրին ամէն առաւել-
ութիւնները տալով:

Յետոյ վկայականները բաշխուե-
ցան 80 ժոռ երկսեռ աշակերտ-
ներու, տեղացի ու գաղթական
խառն: Իւրաքանչիւր կարգի վկա-
յականի յանձնումէն յետոյ, աշա-
կերտները երգեր երգեցին, ըն-
կերակցութեամբ գաշնակի, զոր
կածէր ծանօթ հայ գաշնակահար
Պ. Գալուստ Մէշտուածեան: Երկ-
սեռ ընտրեալ բազմութիւնը որ հոն
ներկայ էր, ծափեց այն սաներն
ու սանուհիները որոնք յաջող հան-
գիսացած էին:

Հանդէսին վրայ քաղցր շեշտ մը
աւելցուցին մանկապարտէզի երկ-
սեռ պատկերները, որոնք իրենց
վարժուհիին առաջնորդութեամբ
մարմնամարզական սիրուն փորձեր
կատարեցին, մանկական երգերով
համեմուած:

Պ. Գեորգ Սիմօնեան շատ կո-
կիկ բանախօսութիւն մը արտա-
սանեց, գովելով Պ. Կիրճեանի
կրթական գործն ու խրախոյս
ուղեղով սաներուն հոգեով փառել
գաւառաբարկութեան:

Հանդէսը, ինչպէս սովորաբար
կըլլայ, չփակուեցաւ պահպանի-

չով մը, հրաւիրուած վարդապե-
տին բացակայութեանը պատճա-
ռով: Պ. Կիրճեան շնորհակալու-
թիւն յայտնեց ներկաներուն ու
հանդէսը վերջացուց:

Փոքր գիտողութիւն մը. դպրո-
ցական այս հանդէսին մէջ, Սա-
հակ Մեսրոպի տօնին օրը, քիչ
մը չափէն աւելի լայն տեղ տրուած
էր օտար լեզուէ երգերու եւ ճա-
ռերու: Ինչ որ լաւ ազդեցութիւն
չըլլաւ:

ԹԻԻՐՔԼԵՐ

Կէնճ Թիւրքլէրին ընկալելի
էսպագը օլան Միթհատ բաշա-
նըն պիր տօսթը սատրգընա կազ-
մըլ օլտըլը պիր մէթուպըն
միւսվէտտէսի եէտիմիղէ վիսուլ
պուլմուշ օլմագլէ միւթալէս օ-
լընմըլ իտի:

Բաշաի մուսուլէյն մէղքիւր մէթ-
թուպընտա թիւրք միլլէթին հալ
ու իսթիգպալընտան պահս ի-
տուպ, օսմանլըարըն կէչէն ա-
սըրլարտա պիւթիւն էվրոբայա
տէհէթ վէրմէքտէ օլտըլարընա
մուղայիր օլարագ ասըր հալըր-
տա տիւլէլի մուսպամայա պաշ էյ-
մէյէ մէհպուր օլմասընտան մաա-
տա, օսմանլըարըն հիւքմիւ ալ-
թընտան գուրթուլան տիկէր ու-
ֆագ իւրիսթիյան միլլէթլէրէ
տախի էվալլաւ իթմէկէ վէ թիւր-
քիա տախիլնտէ պուլունտն իւր-
իսթիյան թապապար ինտիտէ
հիւքմու թէհսիրինի զայա իթմիշ
վէ տահատա զայա իթմէկէ մահ-
քիւմ պուլունտըլընք քէմալը թէհ-
սիւֆլէ նագշ ու թէրսիւմ իթմէք-
տէ իտի:

Բաշաի միւղարիլէյնի գալպի
վաթանբէրվէլիք տիլէլնտէն
մուստորըպ օլուպ, տէրճան ու
տիլտէն ահ իտէրէք, տէրտի-
«Պիւթիւն ճիհանըն թէրագըր
իթտիկի շու պէմանտէ թիւրք միլ-
լէթինին թէտէնի իթմէսինին
սէպէպ ու հիւքմիլ օսմանլը հիւ-
քիւմէթիլին շու ասըրն մաթլու-
պաթընա ըրայէթ իթմէսի վէ
իսլամ էհալիյի կիրտապը ճէհա-
լէթտէ վէ ուլում ու ֆինտանտան
մահրում գըրագմասը տըր: Թէ-
րագըրմըլ իշիւն էվրոբա ուսուլի
իւլըէ էն էվլէլ մէթթէպլէր լա-
զըմ իրէն, պիր թագըմ մէտիւրէ-
սէ թապիր օլընան ահմագհանէ-
լէրտէ էպնաի վաթան քէօր քէօ-
րիւնէ 8-10 սէնէ տէվում իթմէքլէ
մէղհէպէ տսիր պալը արագճա
իպարէլէր թէրճիւմէ վէ էղպէր
օլմագտան պաշգա պիր շէյ էօյ-
րէնմէքիլին, էվլէլէլնտէն տա-
հա սէրսէմ, տահա ճահիլ օլտը-
ղը հուլտէ պաշընա պիր թօր սա-
լըգ սարուպ հաֆըլ, ալիւմ, վէ
հօճա վէ վաիլ ինվանը իլէ մէյ
տանա ալըլըր: Պու կիպիլէրին
վիճուտի պիլիւմ թէտէնիմիղէ
սէպէպ օլմագտան պաշգա պիր
մուհասէնաթըր եօգ տըր:

«Պիղէ թապի օլան խրիսթիան»
միլլէթէր իսէ, էվլորանըն թէ-
րազգընա մէտար օլան ուսու-
լէր իւզրէ մէթէպլէր իւշառ ի-
տուպ, անլէրէ իւշառպլէր իւթմէթ
դուրէթիւնտէ պուլունարապ, էզ-
հէրհէթ ասըն մաթլուպլա-
րընա թաթպիլէն հարէթէթ իթ-
մէթտէ օլորգլարընտան, պիլ ան-
լէրին իւզրէրինէ հաթիմիյէթ սը-
ֆաթընը հայիզ օլորգլարըն հալտէ,
անլէր պիլգտէն չօգ իւշրի կէշ-
միլլէր վէ մէտէնիյէթ թարիդին-
տէ միւճէսսէմ միւսֆէլէր գաթ
իւթմիլլէր տիր. վէ թապիի տիր
քի մէտէնի պիր գաթմ քէնտի մա-
տունընտա պուլունան ճահիլ պիր
գաթմըն թահիլը թէպիլգիւնտէ
գաթմայա թահամիլլէր իւթմէթիպ,
հազասընը գուրթարմադ լիւլա-
շընտա պուլունանադ սըր. իշլէ
պու սէպէպլէ թիւրքիս պիր չօգ
էյալէթ դայալ իւթմիլլ օլուպ, շու
հալէ տէվամ օլունըր իսէ տահա-
տա իւթ չօգ դայալընը օլաճա-
ղընը միւշալաթը գալպիմի էզ-
մէթթէ տիր:

«Տէվլէթի պու հարէթէթտէն
գուլթարմադ լազըմ տըր, հահս...»
Անը գուրթարմանըն հէքանէ թա-
րիգի տաթի գանունը էստաթին
(Սահմանադրութիւն) թանգիմ վէ
մէվգըր իճրայա գօնըմասը իւթ
պուլունանադ տըր...»

Միթհատ բաշա պու մէթթուպը
հազաղըն սըրատա գանունըն էսա-
սիի գալէմէ ալմադտա իտի. մէզ-
քիւր գանունտա մէճիսի մէպու-
սանըն պէշտէ պիրի խրիսթիան
վէ 5տէ էի իսլամարտան թէշքիլ
օլունանադընը կէօսթէրի իտի:

Բաշա միւսմաթիլէն մէզքիւր
մէթթուպընտա տէմիլ տիր:

«Պիղէ թապի օլան խրիսթիան»
լարա պիլ հէթիլլէպլէմէք իշիւն,
անլէրի թէրազգընտան մէնն իտիպ,
էվլորա ուսուլը իւզրէ մէթթէպլէր
վէ տարիւթիւնտէրթէշքիլի իլէ,
միւթէմատիւնէ էլլի սէնէ քէմալը
կէրմի իլէ չալըմալը, վէ էկէր
իշպու էլլի սէնէ վարֆընտա խրիս-
թիյանլարը թէրազգընտան մէնն
իւթմէթ իսէթ, անլէր պիլգտէն էվ-
վէլ հօլա չըգմըն օլորգլարըն սէ-
պէպլէ, անլէր տայիմա պիլգտէն ի-
լէրի կիտէճէթլէրինտէն, պու հօլլէ
մազսէտ հասըլ օլմազ:

«Մազսէտի մէթսէտիլիլէ վասըլ
օլմազ իշիւն հէր հալտէ գօնաթիշ-
թիսիօն ուսուլի իլէ, մէճիսի մէ-
պուսանտա իսլամ մէպուսարըն էթ-
սէրիյէթի իշիւնտէ խրիսթիյանլա-
րըն սէսիլի պօղմազ վէ օ հօլլէ
անլէրի ալմաճուլընը իշիւնէ ալ-
մազտան մատա չարէ հօգ տըր:

Իտարէի հաղըրէմիլլին ուսուլի
ուսուլ էվլորաթտան թապիլհ օ-
լընմադտա օլորգլար սէպէպլէ, խրիս-
թիյան թապալարընըն թէշքի-
քիսի պէհազգին էվլորանըն շա-
ղարը տըգգաթընըն ճէլպ վէ անը
տաթիլի իշլէրիմիլլէ միւտաթէլէյէ
սէվգ իւթմէթտէ տիր: Ֆազաթ գա-
նունըն էսասի մէվգըր իճրայա

գօնալարընտա, մէճիսի մէպու-
սան, ուսուլ էհայիլին սրֆաթընը
հայիզ օլաճաղընտան, անլէրէ էվ-
լորանըն միւտաթիլհայիլի պիր սէտա
էէթիլմիլլ օլաճաղ տըր...»

Միթհատ բաշանըն մէթթուպը
նըն մէպը պուրայա մաթթա-
րէն տէրճ իւթմէթլէ, բաշաի միւ-
սմիլլէյիլին նէ մազսէտէ գանունը
էսասիլի գալէմէ ալմազ օլորգլարը
օգուլանլարընըն միւլահազասընա
իհալէ իտէրիլ:

ՄԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Թաշմըզըն Ալիսնատան ալա-
ղը պիր բէսմի բաթըրթա կէօրէ
գաննատա պաշըպօլուքընը վէ
ինկիլդ ասթէրլէրի պէյիլինտէ շէ-
տիտ պիր միւսատէմէ վուգու պու-
լուպ 16 ինկիլդ ասթէրի վէ պիր
չօգտա պաշըպօլուքընըն էօլմիլ-
լէր տիր: Իսլամլարըն հարէթէ-
թիւնի մէնն իւթմէթ իշիւն ամի-
րալար պէշ զըրհըր Գաննայա
կէօտէրտիլէր:

Կիրիսի շարգ գաղալարընտա
ասըլարըն սէրկէրտէսի պուլունան
Գարապաս իսթիլլալըն էօնիւ ալ-
մազ իշիւն պաշըպօլուքընըն էլ-
լէրինտէն սիւհալարըն թօրլանը-
մասըն Գաննա գօմանտանընտան
թալէպ իւթմիլլ տիր:

Յուլիս 2 թարիլի Սթանպու-
լան քէշիտէ օլընան Պալգանիթ
թէլէկրաֆլարընտա պէրվէճի ա-
թի օգուլմուլ տըր:

Պէօյիւք տէօվլէթլէր վէրմիլ
օլորգլարըն ճէվալարընտա՝ սինօր
մէսէլէսիլտէն էլլիլէրին վէրտիլի
գարարը Սուլթանըն գապուլ իւթ-
մէսիլի թալսիյէ իւթմիլլէր տիր:

Իմթէրաթ օլ Վիլհէլմին վէրտի-
լի ճէվապ իսէ Սուլթանըն ար-
գուլընը պիր տէֆա տաթի ալ-
ման հիւքմէթիլինտէն թէտգըզը
նազարա ալընաճաղընը պիլտիր-
միլ իսէտէ պիլ ալէրէ Ալման սէ-
ֆիլի Մ. Սաուրմա Ելլէ Պապը
Ալիյէ միւրաճաթլէ սուրէթը
գաթիլիտէ սինօլար իշիւն վէրի-
լէն գարարըն Պապը Ալիտէն գա-
պուլ օլընմասընը քէնտի հիւքիւ-
մէթի թարաֆընտան իսթար իւթ-
միլլ տիր:

Մէնպալի մէվսուգէտէն ալընան
մալիւմաթա կէօրէ, Չարըն վէրտի-
լի ճէվապ էն միւսսիլի օլուպ
էկէր թէսալիս թիւրքլէրտէն
թէրք օլընմազ իսէ Անատօլ զը-
լմասընտա թիւրքիյա գարըն
թէտապիլըն խուսուլմէթիարանէ-
յէ միւրաճաթ օլընաճաղընը
թէհտիտէն պիլտիրմիլլ իմիլ:

Սուլթան Չարա ճէվապ վէրմիլ
իսթէյուպ Չարըն արգուլընա
իճապէթ իւթմէյէ չալընաճաղընը,
ֆազաթ օ հալտէ իսլամ էհալի
վէ սասքիլ ինտիլնտէ մէսուլ գա-
լաճաղընը պիլտիրէճէր իմիլ:

Մէթքիւր մէսէյէ հազգընտա
էհալի սիւֆիլիլտէ իսէ տէ զա-
պիլմիլլ. հիւքիւլմէթ մէմալիւ-
լը վէ. սիֆիլտար թիւսիլիլտէն
թէրք օլընմասըն էֆթարընա գալ-
շը պուլունըն օլուլար. կէօրիւնի-
լէ նազարէն, պուլունըն թէշլիլգ
իտէն հիւքիւլմէթ քէնտիսի տիր:
Տիւնքի մէճիսի վիւքէլաթա պու-
լունուս հազգընտա վէրիլէն գա-
լարըն նէ օլորգլար էլան պիլիլմէ-
յօր:

Վանտա՝ Թօգտա իսթիլլալըն-
տան բէթ տէհէլլի սուրէթտէ
պուհուլա կէլէճէթ գարընըզըզա-
լըն էօնիւնիւ ալմազ մազսէտի
իլէ, սապըզ վան վալիսի Սուլ-
թանա պիր բաթըրթ վէրիպ, մէզ-
քիւր վիլայէթտէ պէօյիլք վէ քիւ-
շիւք մէմալարըն ալլ օլընմասը-
նըն վէ իւլարք միւթէպէրանըն
թէպիլտիլն իգլիլգասընը պիլտիր-
միլլ տիր:

Սրաւնալարա Սթանպուլտան հա-
ղըլարընա կէօրէ, մուհարէպէ
թարաֆտարըն օլան Սաուրալա-
մըն Պուրապա վէ տաթիլիյէ նա-
ղըլընըն էնկիլլիլէ վէ սէրասթէ-
րին վանա վալի թայիլն օլընա-
ճազլարընա տայիլ Ելընըզտա
չայէալար կէզմէթտէ իմիլ: Պու-
հօլլէ վիւքէլանըն թէպիլիլ թիւր-
քիա բօլիլիլգասընտա պիր թէ-
պէտիլաթ վուգույա կէլէճիլինի
իմա իտէր:

Պապը Ալի տէվլէթլէրէ պիր
նօլմա վիլուպ, Եսնան ասթէր-
լէրին Եպիլուստա վէրմիլ օլորգ-
լարըն զարարլարա մուգապիլ
400,000 լիւրա թալէպ իւթմիլլ տիր:

Պիր գաշ կիւնտէն պէրու
Սթանպուլ Բուսիա էլիլի Մ. Նէ-
լիտօֆա գարըն պիր հատիսէ զու-
հուր իւթմիլ օլորգլարա տայիլ
միւպուլէղալըն շաիլար կէզմէթտէ
իտի իսէտէ, Սթանպուլտան թա-
նա հաղըլարընա կէօրէ, մէզ-
քիւր հատիսէ էհէմմիլլէթէ շայան
տէյիլ տիր: Էլլի Պէօյիլքտէլէտէ
կէզէր իքէն պիր ասթէր անը
գաթմալարապ «Կիտի կեալուր»
սէմիլ վէ պիլալէրէ էլլիլին
իւրմէթթէրալարընտան Բուս սէ-
ֆիլի օլորգլարըն անլամասընտա
ասթէր Մ. Նէլիտօֆըն արգասըն-
տան գօշուպ, իսթասընա աֆիլ
իւթմէթիլ իրիս իւթմիլ վէ պու-
հօլլէ մէսէլէ գարանըն տըր:

Ալմանիտա թէշքիլ օլընմը
օլան էրմէնիլէրիլլէրան ալըման
շիլքէթիլն բէյիլի Մ. Տօթթօր
լիւսիւս պիր գաշ կիւնտէն պէ-
րու վարնայա կէլմիլ օլուպ, պու-
րատա թէհասիս իւթմիլ օլորգլարը
իւթմաճանէլէրի թէֆիլիլ իւթմէթ-
տէ տիր:

ՉԱՍԻՐԷ ԲԻՍԱՍԻՐ

Վաւա 5 Յուլիս

Պապը

Վաւա, 56-58 իպրա հէթթիլ.
8,90-9,40 ֆրանք
Արապա, 57-64 իպրա, հէթթիլթիլ
9,40-10,40 ֆրանք

Արա

44-46 իպրա, հէթթիլթիլ. 5-5,20

Մըսըր պաղտայր

Հէթթիլթիլ 5-5,20 ֆրանք.
Նարօլէն 20,60 ֆռ. հիսապը իլէ
կիւնտէ 2-3 վաւա վէ 5-6
արապա պուլուպ 2-3 արապա
արա, վէ 2-3 արապա մըսըր
պուլուպըն ինմէթտէ տիր:

ՏՕՐԹ Ե ԹՈՂԱՐԱՍԵՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հա-
սարակութեան թէ վերադարձած է
Սոֆիան եւ կընդունի հիւանդներ ա-
մեն օր իր տունը ի Պալք Բազար,
առաւօտները ժամը 10էն 12, իսկ կէս
օրէն վերջը 2էն 5: Չորեքշաբթի օրերը
կէս օրէն վերջը ձրիապէս կը դարմա-
նէ: 7-10

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

ՄԻՄՈՒՆՉ ՀԱՅԱԿԱՆ

Սոյն Երգարանը որ կը բաղկա-
նայ առաւել քան 100 երեսէ, կը
պարունակէ շատ մը հին եւ նոր ա-
ղատ երգեր, զորս այժմ ժողովորդն
ախորժանօք կ'երգէ:

Փափաքողք կրնան ստանալ զայն՝
փոխարէնը 1 ֆրանքի նակակադրոշմ
(բօստի բուլ) խրկելով խմբագրու-
թեանս, կամ գիմելով հետեւեալ
հասցէներուն:

Նարք

Արիս Գուրպէթ. Թուսնուգ
Տիգրան Աճէմեան Շուվու
Կարապետ Թօթազալ. Սիլիստրէ
Մարտիրոս Գէնտիկեան Պուրկազ
Խաչիկ Թօթաճեան Սիլվէն/
Ալէքս. Տէմիրճիպլ. Ֆիլիպէ
Իսկէնտէր Արաւանեան Տօպրիլ
Յովհաննէս Պիլէոճեան Պուրքէշ
Արթ. Տէր Ղեւոնդ քնյ. Կալապ
Թէօֆիլ Թէրզեան Գէօտէնճէ
Ասատուր Բրուտեան Գանձիլ
Տիգրան Արաւանեան Ալէքսանտրիա

Ալգ. վարժարանաց համար՝ երբ
գէթ 10 հատ կ'ուզուի, 20 առ 100
զեղչ կը լինի:

Ա. Զ. Դ.

Իրաւունք կը վաճառուի նաեւ Օթէլ
Փօմէրսիլիլն Երեւ. Տ. Սանտաճեանի
ծխախոտի վաճառատան մէջ. ինչպէս
նաեւ Մուսալլաի հրապարակին վրայ,
Տ. Մկրտիչի սրճարանին կից, հայ
ծխալաճառ—սրճալաճառի խանութին
մէջ, նաեւ Մուսալլա Ապուլլաիանի
մզկիթի դէմ Պ. Աւետիս Չարբանէ-
լեան գրալաճառ—թղթալաճառի խա-
նութը:

Փափաքողք կրնան ամեն ատեն թերթ
գտնել այս երեք տեղերը: